ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված՝
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 03.11.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը
Անդամներ՝ Վ. Ավետիսյանը
Ս. Քոչարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 05.11.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Միկրորինգ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի 05.11.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Միկրորինգ» ՍՊԸ–ից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած «Միկրորինգ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված փաստաթղթերը «Միկրորինգ» ՍՊԸ–ն eauction.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /անվանում, ապրանքային նշան, արտադրող, ծագման երկիր, տեխնիկական բնութագիր/:

3. Հանձնաժողովը որոշեց. «Միկրորինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և 3 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Միկրորինգ» ՍՊ ընկերությունը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ս. Քոչարյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան